ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 հունվարի 2015թ. թիվ 5-Ա

Ս.ԱՌՈՒՇԱՆՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109 հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետի, 112-րդ և 130-րդ հոդվածների, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.17 կետի «ա» ենթակետով, հաշվի առնելով Ս.Առուշանյանի դիմումը՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. Սոնյա Առուշանյանին ազատել «Վանաձորի թիվ 4 պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ի տնօրենի պաշտոնից և լուծել նրա հետ 2014 թվականի հունիսի 16-ին կնքված աշխատանքային պայմանագիրը:

2. «Վանաձորի թիվ 4 պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ի գլխավոր հաշվապահին՝

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Սոնյա Առուշանյանի հետ կատարել վերջնահաշվարկ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2015 թվականի փետրվարի 2-ից:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2015թ. հունվարի 16
ք.Վանաձոր